

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՕԳՈՒՏ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ գաւառի արկածեալներին մեզ մօտ մնացած 57 կոտոր շորեղէնը շրկեցինք Ախալքալակ և 57 ուսուցիչ գումարը լանձնեցինք Թիֆլիսի գլխաւոր կոմիտէին. Մեզ մօտ ալ ևս այդ հաշից շորեղէն և դրամ չի մնում:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ բանաստեղծ Աւետիք Իսահակեանը ուշեորում է արքայաճաման իւր երկու տարի առաջ ընդհատած համալսարանական կրթութիւնը շարունակելու. այ. Նիկողայոս Ազբաղեանը, լալոնի իւր գրական-քննադատական նախափորձերովը, ուշեորում է նախ Մոսկու, համալսարանում սուսաց գրականութեան և ապա Գերմանիա՝ ընդհանուր գրականութեան դասերին հետեւելու համար. Երկուսն էլ կը շարունակեն իրենց աշխատակցութիւնը Մօրծ'ին:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Ներքին գործերի մինիստրի երրորդ ընկեր (—օգնական) նշանակած է Պ. Ն. Իսւրնոփօ. վերջինս նախկին փարիներում նոյն մինիստրութեան մէջ ունեցել է ստորիկանութեան բաժանմունքի դիրեքտորի պաշտօնը, իսկ վերջին փարիներս ներկայ էր լինում սենատի առաջին բաժանմունքում և անդամ էր կառավարիչ սենատի առանձին ստեանի՝ պետական լանցանքների գործերի համար:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Կարսի շրջանի զննորական նահանգապետ նշանակւած է գեներալ-մալոր Սամոյլով:

ԷՋՄԻԱՄՆԻ ՍԻՆՈՂԻ անդամ է նշանակւած Մակտոր եպ. Բարխուդարեանցը, որ առաջ լուսարարապետ էր:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԱՐԿԱՍՏԵԱԼՆԵՐԻ օգրին մինչև փետրւարի 20 Թիֆլիսի գլխաւոր կոմիտէի մօտ ժողոված էր 175.000 ուսուցիչ, չհաշւած իրերոտի եղած նւերները. Փետր. 19-ին նոյնպէս եղաւ զգալի երկրորդ ժ. փառճեակ տուն փրկեցան:

ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.—Ալէքսանդր Մանթաշեան (Թիֆլիս) Թիֆլիսի հալոց փոնքի մալրեկեղեցու ներքին վերաշինութեան համար ճարտարապետի

Նախահաշուով որոշւած շուրջ 26.000 ուսուցիչ ծախքը իւր վրայ է աւելի
 — Օհանջան Թաղէտոսեանց (Շուշի, վախճ. ներկայ փետր.) կոտա-
 կով թողել է քաղաքի եկեղեցիներից մէկին 500 ու., քաղաքի շորա-
 րպարոցներից իւրաքանչիւրին 200-ական ու. ուրեմն ընդամէնը բա-
 րեգործութեան նպատակով 1300 ու.:

— Լևոն Սարգսեանց (ուսուցիչ Լազարեան ճեմարանում) ի վաշ-
 տակ իւր հօր (Յշնալի բնակիչ, Նախիջևանի գաւառ, վախճ. 1899-ին)
 նւիրել է Կովկաս. կալսերակ. գիւղատն. ընկ. 300 ուսուցիչ աշ-
 ւանով որ աչգ. գումարի հաշի հրատարակւին հայերէն լեզուով գիւ-
 շատնոսութեան վերաբերեալ գրքովներ: Գրքովները վերաբերելու
 են պոլի ազգիների մշակութեան, պոլի գործադրութեան և թփալին
 անտառաբուծութեան. ձեռագրերը քննելու է չափուկ մասնատուով.
 Գրքովները լինելու են 1½ թերթից (48 էջ) ոչ աւելի, փոքրադիր.
 թերթին (64 փոքր էջ) որում է վարձատրութիւն 64 ուսուցիչ. գըր-
 քովները տպւելու են 1200 օրինակ. ամեն գրքովի գինը լինելու է
 10 կոպէկից ոչ աւելի. գրքովների վաճառումից գուցեցած արդիւնքը
 մշտապէս ծառայելու է նոյն նպատակին: Այս կանոնները մշակել են
 պ. Սո. Զեկինսկի և ընկերութեան քարտուշար Խպ. Իոսէլեանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼ:

«Արարատ» ամսագիրը (պաշտօնական ամսաթերթ Ս. Էջմիածնի
 Մալր-Աթոռի) ներկայ տարւոյ լուսնար ամսից լոյս է տեսնում նոր
 խմբագրութեամբ. հրատարական տւած Կարապետ վարդապետ Տէր-
 Մկրտչեանի տեղ՝ Վ.Ե.Տ. Կաթողիկոսի կոնդակով նոր խմբագիր է
 նշանակւած Գարեգին վարդ. Յովսէփեան: Կաթողիկոսի կոնդակի
 մէջ պատւիրում է՝ «Չանալ մատչելի կացուցանել Արարատը գիւղա-
 կան քահանաներին և հասարակութեանը՝ կրօնական, բարոյական,
 կրթական, գիւղատնտեսական, առողջապահական և այլ լօշւածնե-
 րով. երկրորդ՝ ջանք գործ ղնել Մալր-Աթոռի ամսագրի մէջ զօրե-
 շացնել գիտական, պատմական, մատենագրական, հնախօսական բա-
 ժինը Ս. Էջմիածնի միաբանութեան բարի անունը և գիտական համ-
 բաւը բարձրացնելու համար»: Որքան լաւ տպաւորութիւն են անում
 կոնդակի խօսքերը, այնքան մեծամիտ են նոր խմբագրի լօշւածի մի-
 քանի ոճերը: Նոր խմբագիրը ներկայացնում է «Արարատը» իբրև
 «Հաչատրանեաց եկեղեցու միակ կրօնական-գիտական թերթը (տ.
 ամսաթերթի լուսնարի տետրը, էջ 19, 2-րդ սիւնակ): Խսկութիւնը
 սա է, որ «Արարատը» միմիայն Ս. Էջմիածնի միաբանութեան, բայց
 ոչ Հաչատրանեաց եկեղեցու թերթն է, որովհետև Հաչատրանեաց
 եկեղեցին չի կարող պառասխանաբուն լինել այն ամենի համար, ինչ
 որ կարող է տպւել Արարատի մէջ. եւ ինչ կը նշանակէր որ և է
 «եկեղեցու գիտնական թերթ»!

—Մասին թերթը (Կ. Պալատ, արտոնատէր Կ. Իսխրանեան), որ վերջին տարին պ. Միք. Շամփանճեանի խմբագրութեամբ իրը երկշաբաթաթերթ էր հրատարակում, ներկայ տարւանից հրատարակուած է իբր շաբաթաթերթ պ. Տիգրան Արփիարեանի խմբագրութեամբ, Հակոբակ Մուրճի շեքրեմքերի համարի մէջ հաշտարածին, պ. Շամփանճեանը այժմեան Մասիսի մէջ մասնակցութիւն չունի, թէև արդ. յիշատարութիւնը եղած էր սկզբում ներկայիս Մասիսը որից արդէն սրացած ենք վեց թիւ, էսպէս տարբերուած է պ. Շամփանճեանի խմբագրած Մասիսից. որքան պ. Շամփանճեանի թարմ հոտանք էր ներկայացնում, այնքան այժմեանը, պ. Տ. Արփիարեանի խմբագրութեամբ հրատարակուողը, թույլ, առանց ուղղութեան, առանց հիմնական լուծածների մի թերթ է, զարտարած լազրնի անուշների լոկ ժամանցի ծառայող լուծածներով:

ԱՍՏԻԱԾԱՇՈՒՆՉՈՒՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ. Վեհ. Կաթիւրիկոսի հրամանով Ս. Էջմիածնի քաղաքանում ներկայ 1900 թւականից պիտի սկսի Աստուածաշունչ ս. գրքերի (Հին և Նոր կտակարան) նոր քաղաքութիւնը. վերջինս լինելու է պատկերազարդ. ճաշակով ու մաքուր քաղաքելու համար հրաւիրելու է Եւրոպայից քաղաքանական գործերին մասնագէտ հմուտ քաղաքիչ. պատկերները առանձին չանձնարարութեամբ պատրաստելու են Գերմանիայում

ԻՒՐԻՑ ՎԵՍԵԼՈՎՍՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ — Գրական զժպրեր — Литературные очерки, որ ծանուցում է մեր նոր սրացած գրքերի շարքի մէջ, մի հաճելի սիրարարից է մեզ համար: Սա մի սուար հատոր է 592 մեծ էջերից բաղկացած և կազմած է 23 լուծածներից, վերարեբեալ եւրոպական, ռուսական և հայկական գրողներին Հակոբանին են վերարեբում՝ Բալրոնը Ս. Ղազարի կղզում, Գրիբոեդովը և Հակոբը, Պուշկինի պոէզիան Ասիայի նախադրունքին, Մ. Պեշիքիաշիկան, Հալոց թատրոնի պատմութեան հնագոյն շրջանը, Կանանց վիճակը՝ ըստ հայ հեղինակների նկարագրութեան: Պր. Վեսելովսկու 10-ամեայ գործունէութեան ընկերական հանդէսի առթիւ մենք ցանկութիւն էինք լազրնել հայերին վերարեբեալ լուծածները մի հատորում հրատարակուած փեսնել. բաց մենք շքիւէինք որ պ. Վեսելովսկին պատրաստւած է եղել մի աւելի ևս լաջող ժողովածու, որ այժմ մեր աչքի առջնն է: Խոյ հուրք ենք պալիս մեր ընթերցողներին ձեռք բերել այդ սուար հատորը, որի դինը, ճանապարհածախսով 2 ա., համեստ է, Յանկացողները ժողովածուն ձեռք բերել՝ կարող են յիմել նաև Մուրճի խմբագրութեանը:

ՅՕՐԵԼԵԱՆ ՍԵՂԻԱԿ ԱԿԱՆԴԻՆԵԱՆԻ Յոճու. 26-ին էջմիածնում փոփոց պ. Սեղր. Մանդինեանի մանկավարժական գործունէութեան 25-

մեակը, որ լրացել էր դեռ եւ անցեալ տարւալ վերջերքը Պր. Ս. Մանդինեանը աւադն է գերմանական մանկավարժութեան Դպրոցին աշակերտած հաջ մանկավարժներին և նոցա մէջ ամենաչալտնին։ Ունի կազմած Դասագրքեր և գրած է բազմաթիւ լօղւածներ ինքնուրոյն և թարգմանական՝ մանկավարժական խնդիրների մասին։ Յօդուհանի և իւր պաշտօնը թողնելու առթիւ վեհ. Աթոռիկոսը բարեհաճել էր նորան 600 ռ. տարեկան կենսաթոշակ նշանակել. իսկ Թիֆլիսի Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութիւնը նւիրել է չօրեւտարին միանագ 600 ռուբլի։ Պր. Մանդինեանի մանկավարժական գործունէութեան գնահատումը մենք սպասում ենք մեր Դպրոցական գործերին հետեւած ուսումնական մանկավարժներից, և այդ արժէ անել, քանի որ պ. Մանդինեանը այս քսանուհինգ տարիներում մեծապէս ազդել է հայոց Դպրոցական գործերի վրայ թէ իբր ուսուցիչ և թէ իբր հայոց Դպրոցական-վարչական կարգադրող մարմնի անդամ կամ իբր այդ մարմնի հետ սերտ կապ ունեցած անձն. իւր այդ երկկողմանի Դիրքովը նա մեզնում եղած է եզակի մարդ։

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

— Պետրովսկի-Ռազումովսկի գիւղատնտեսական բարձրագոյն Դպրոցում (Մոսկուայի մօտ) կանանց համար գիւղատնտեսական կուրսեր են բացուում. կուրսերի սկիզբը առաջիկայ մայիսին։

Փինլանդիա։ Օրէնքների և տնտեսութեան չանձնաժողովը 9 ձաւնով 6-ի դէմ առանց փոփոխութեան ընդունեց Միսիսիւնի այս առաջարկը. «Կինը աւտոհետ տղամարդու հետ հաւասար կարող է ընտրել ըլոր հասարակաց պաշտօնների. այդպիսի պաշտօններ ընդունելու և վարելու համար կ'իող պարտաւորութիւնների և Դոցանից հրաժարելու իրաւունքի վերաբերեալ գործում են նոյն այն կանոնները, որ սահմանւած են արական սեռի քաղաքացիների համար»։

ՔԱՔԻԱՑ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՏՈՂ ընդդէմ կողմասի Դպրոցական իշխանութեան, որը այդ ընկերութեան շինութիւնը գրաւել էր, համարելով այն իբր նախկին հայոց ծրական-եկեղեցական երկսեռ Դպրոցներին պատկանող, քննւեց Բաքուայ Նահանգ. Դատարանում փետր. 1-ին և վերջացաւ նրանով որ Դատարանը որոշեց Մարդասիր. ընկերութեան պահանջը մերժել, ընկերութիւնից պահանջելով Դատարանական ծախքերը 830 ռ.։ Դպրոցական իշխանութեան ներկայացուցիչ Տխորժեսկին այս առարկութիւններն էր անում թէ ա, Մարդասիր. ընկերութեան կանոնադրութեան (հասանաձայն (1864 թ.) ընկերութիւնը կարող էր իրեն նւիրած կազմ ընդունել միայն կողմասի փոխարքաւի թուղտութեամբ, իսկ այս դէպքում պահանջւած թուղտութիւնը չունի ընկերութիւնը, այլ սա

միայն մտադիր է եղել խնդրամատուց լինել այդ թուղթութիւնն ստանալու. ք, ընկերութեան չէնքը կատուցել է մի գետնի վրայ որը ընկերութեան խնդիրքի հիման վրայ Նւրբու է քաշաքը՝ հայոց ուսումնարաններէ չէնք կատուցանելու համար. Յ, չէնքը կատուցուած էր չափազանց հայոց ուսումնարաններէ համար Նւրբու գումար ներով

ՊՐ. ՇՈՎՐԵԱՆ ԵՒ ՄԻ ՆԱՄԱԿԻ ՍԿԻՋԲՆ ՈՒ ՊՈՉԸ.

Մենք ստացել ենք հետեւեալ նամակը.

Արզու պ. խմբագիր

«Մուրճ» ամսագրի ներկայ 1900 թ. № 1-ում, Չանազան լուրերի շարքում, ի միջի ալոց, 18 տուրքից բաշկացած մի արդարացի նկատողութիւն է փպւած իմ վերջին գրքակիս սխալ և անդամար խորագրի մասին, որը, անկասկած, նկատած կը լինին նաև Մշակը և Նոր-Նարբ, քանի որ նոցա էլ ուղարկել եմ իւր ժամանակին մի-մի օրինակ պրոֆ. Գ. Ն. Անուշինի շտաբի հարկէն թարգմանութիւնից: Սակայն վիշեալ լրագրիները քննադատութեան շնթարկեցին գրքիս խորագիրը, որի կատարելապէս սխալ լինելն ակներև է նոյն գրքի երկք էջ չառաջարանիցս: Ուրեմն, ինչպէս փնտում էք, ալստեղ մի շատ սովորական թիւրիմացութիւն է կատարել: Բայց թէ մեքը ումն է. այդ ճշտիւ գուշակում է Ձեր վերը վիշած նկատողութեան վերջին տողից: Ընքն ըստ ինքեան հասկանալի է, թէ փոխանակ գրելու՝ Մ. Շովրեան և ալլն... գրքիս խորագիրը ուղղելու է ալսպէս՝

«Գ. Անուշինս. Հայերը մարդարանական և աշխարհագրական փնտակեցից. թարգմ. Մ. Շովրեան, և ալլն և ալլն.

Կարծում եմ, որ գրականական էթիկայի խնդիրներ արծարծել ու զուր փելը նիգակ կոտրել մի թիւրիմացութեան պատճառով միանգամայն աւելորդ է. ընդունեցէք և ալլն:

Փետր. 21-ին

Մ. Շովրեան.

1900 թ. Մոսկու:

Այս նամակի մէջ պ. Շովրեանը, որպէս փնտում է ընթերցողը, սիրտ չի անում իւր բերնով չափանելու թէ ով է մեղաւորը որ իւր թարգմանած ու հրատարակած գրքի երեսի ճակատին հեղինակի անուն փնտում Անուշինի փոխարէն Շովրեան է գրած. ապ. (ասում է նա) ճշտիւ գուշակում էս՝ Մուրճի «նկատողութեան վերջին տողից» և ընթերցողին է թողնում գնալ-նախելու թէ ինչ էր ասած այդ վերջին տողում: Հոգեբանորէն հեշտ մեկնում է այդ կրտսարե-

րան արդարանալը. Դորա համար բաւական է պ. Շովրեանի նամակի սկիզբն ու վերջը իրար համեմատել: Սկզբում՝ մեր արած նկատողութիւնը նա գոնում է «արդարացի», իւր գրքի խորագիրը «սխալ և անչարմար», նոյն իսկ «կատարելապէս սխալ»: Բայց, չնայած այդ ամենին, պ. Շովրեանը «կարծում է», որ մեր նկատողութիւնը եղած է ոչ այլ ինչ քաջ եթէ «զուր տեղը նիզակ կոտրել», և վերջապէս նա չաղտարարում է մեր նկատողութիւնը «աւելորդ»:

Մինչդեռ մեկ համար այժմ բոլորովին պարզ է, որ եթէ իսկապէս տպարանը սխալած լինէր՝ հեղինակը կամ հրատարակիչը մեր նկատողութիւնից այդպէս չէր նեղանալ: Նրկորոյ՝ տպարանական այդպիսի «սխալ» անուշիւի չէ. դրական պատիւ հասկացող մարդը այդ «սխալը» կուշէր գրքի ծածկը նորից տպել տալով, և անկասկած դրանով պատճառած 5-6 ուրբի նոր ծախքը չանձն կառնէր՝ հասարակութիւնը մոլորեցնելուց ազատ պահելու համար: Նրորոյ՝ պ. Շովրեանը աչքքան ներելի սնապարծութիւն է համարել հեղինակի անւան տեղ իւր անունը փալեցնելը (իւր ասելով՝ «մի սովորական թիւրիմացութիւն») թէկուզ միայն գրքի ծածկի վրայ (հեղուապէս և լրագիրներում ու բոլոր գրատարանների գրացուցակներում), որ նա մինչև իսկ ձեռքով չի ուշիւ «տպարանական սխալը»: Միթէ այս բոլորը բաւական չէ հաւանական գոնելու համար, որ պ. Շովրեանը ինքն է կամեցել գրքի սխալ վերնագիրը: Եւ պնդում է արդեօք պ. Շովրեանը, թէ ինքը չէ իւր իսկ ձեռքով գրել բրոշիւրի վերնագիրը, և պնդում է արդեօք թէ իւր ձեռքով գրածը տպարանում ալալել են?

Այժմ թող պ. Շովրեանը կատարելապէս մխիթարւի, որ Մշակչու Նոր-Պարձ «քննադատութեան չենթարկեցին գրքի խորագիրը»...

Եւ միթէ նոր է չաղտնուում այդ գրական կեղծութիւն ասենք թէ սնապարծութիւնը: Գիրքը արտատպած է Արարատից, ուր այդ թարգմանական լօղածի տակ պ. Շովրեանը Դարձեալ Դրել է իւր անունը, բոլորովին այնպէս ինչպէս այդ կ'անէր հեղինակը ինքը:

Մուրճը, որ Դէմ է ամեն կեղծիքների, Դէմ է նաև գրական ամեն տեսակ կեղծիքների: Նիտակութեան կանոնները պահպանել պէտք է ամեն տեղ: Մենք ինքներս այդ կողմից խիստ ենք եղած Մուրճի մէջ, և ի հարկէ՝ ոչ նորա համար որ անտարբերութեամբ նախնք Դէպի մեր շուրջը կատարուող կեղծիքները: Եւ եթէ գրական էթիկայի խնդրին նւիրած էջերին աւելանում է այս մի-երկու էջը՝ Մուրճի մէջ, մենք այդ զուր վատնած թուղթ ու մուր չենք համարում:

Մի Դաս ևս պ. Շովրեանին՝ քաշաքավարութիւն ասած բանից:

Նա մեզ նամակ է գրում և վերջը շնում այս տոշերը՝ «Ընդունեցէ՛ք եւ այն»։ Մ. Շովրեանն։ Որքեղ է լաւած, որ մարդ ընդունակ լինի ընդունել սե ալլնո առած քանի Չէք կամենում չարգանքի խաբ անել—չրա շէմ չենք. բայց մեզ ընդունել տալ սե ալլնո-ներ, այդ մեզ չի չաջուիլ և այդ միտքն առիթ կը տալ մեզ մտածելու, թէ այդ թնչ կրթութեան տէր մարդ է պ. Շովրեանը, որը հրապարակու թէ գրքի խորագրերն է աշուարում և թէ քաղաքագորութեան ամենապալզ մեները։

ՄԵՐ ԵՈՐ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՄԻ ՔՆՆԱԳԱՍԸ—կամ Յրա-լիզումեան պրոգէսի շարունակութիւնը. Քննադատութիւնը, իրրն անկեղծ համոզմունքի արտապայտութիւն, միշտ լարգելի է. և մենք չենք կարող պահանջել որ ամենքը անպարճառ մեր համոզման լինեն։ Բայց թնչ կատէք այն կեղծ-քննադատութիւնների մասին, ուր փեսնում էք լոկ արտաբարման ձգտում, և այն էլ այն կերպ արտապայտած, որ արտաբարձորը միշտ կարող լինի եր ու եր կանգնել ու պարաստանաբարութիւնը իւր ուսերից թօթափել և կամ երր պարզ փեսնում էք որ աւտուալ պնշածը միմիայն նրա համար է որ վաղը շորա հակառակը պնշեն։

Թէ ում ձգրու է այդ խաղը խաղացում, այդ կը հեփեցնի ինքը ընթերցողը. բայց ահա մի այդ փեսակ քննադատի տողերը, որ մենք արտագրելու հարկի մէջ ենք փեսնում մեզ, որքան և զգանք զգանք Տոցա մէջ ծածկւած կեղծ-զգացմունքներից և խորամանկութիւնից. սկար մի փեշ, ուր պայծառ էին Պէշիկիթաշեանների, Գամառ-Քաթիպանների, Գուրեանների, Շահազիզների անունները. այդ փեշն էլ ապականեցին բանաստեղծութեան մասին բարբարոսական հասկացողութիւն ունեցող գաճաճներ, որոնք անխընայ քրքրու, զրգուում են ընթերցողի ջիւրը իրանց վըշտերով, էրտփիական կրքերով և բութ միակողմանիութեամբ։ ԲԱՅԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Ի ՀԱՄԷ, ՄԻԾՏ ԿԱՆ. բայց վանդալական այն հեղեղումը, որ մտել է մեր գրականութեան մէջ, այդ բացառութիւններն էլ է խելում և վերջ ի վերջոյ ընթերցողը, ըստ երևութին, պիտի սոսկայ, փեսնելով բանաստեղծութիւնների ամենի մի նոր հագոր, որ շուրս է գալիս մամուլի տակից՝ մեր գրական շտրախտ ա քաղութիւնը անլի ևս անտրանելի շարձնելու համար։ Այսպէս շարունակելով մենք չենք հասնի մի ժամանակի, երր բանաստեղծ և բանաստեղծութիւն բառերը այնքան արտաբարձում կը լինեն, որ ոչ ոք չի ուզենայ ուշադրութիւն շարձնել նորն իսկ չնորք ու տաշանդ ունեցող բանաստեղծների վրայ։ Ապականում է հասկացողութիւնը, ապականում է Պատնասը։ Հարեանք...

Մեզ համար բոլորովին պարզ է, որ բառերի այս ամբողջ շեշտակաբար միմիայն նորա համար է հարկաւորուել Մշակի՛ն, որպէս զի այդ առ երևութ վաչնասունի մէջ մաքսանենգութեամբ ներս սպըր-շեցնի այն մի քանի բառերը, որ մենք շիտամբ խոշոր ենք տպել: «Բացառութիւնները, ի հարկէ, միշտ կան»: ուզում է ասել որ Մշակ՛ը այսօր արդէն ճանաչում է մի քանի նոր բանաստեղծներ, որովհետև այդ անունները շարունակ ուրանալը, թէկուզ այդ եղած լինի միայն Մուրճի ջգրու, ալ ևս ձեռնտու չէ: Ահարձեռն իսկական բանաստեղծ-ները բացառութիւններ չեն ամեն տեղ ու ամեն ժամանակ, մարդը ամբողջ 40—50 տարուայ արեւելահայոց անցեալից միայն երկու «բայառութիւններ» է ճանաչում—մի Գամառ-Քաթիպա և մի Շահաղիզ—այժմ նա վաչնասուն է բարձրացնում ակամայ խոստովանութիւն անելով որ վերջին տասնեակ տարին Պարնասը արեւելահայերից մի-այն մի քանի «բացառութիւններ» է իրեն որդեգրել: Ի՛նչ եղևիտու-թիւն: Միշտ միևնոյն վեշակը—ուրանալ, Մուրճի շէմ կուելու համար, ու ապա—տարիներ չետո՛ խոստովանել որ և է նոր հաշ-ւի համար: Երէկ նոքա իսկի չկային, այսօր նոքա կան, բայց միայն բացառութիւններ ընդհանուր անունով: վաղը, փոխանակ «բացառութիւններ» խօսքի, կը տրւին արդէն սրոշ անուններ, բայց շեռ պէտք է սպասել, ձրիպէս անուններ չի տայ Մշակ՛ը, նա սո-վոր է առուտուրի: Քննադատութիւնն էլ Մշակի՛ համար առու-տուրի մի ձիւղ է. նա սակարկութեան է սովոր, բազազների պէս, նա շեռ կ'ուրանայ, չետո՛ կ'ընդունի, բայց անուն չի տայ, եթէ իրա հաշիւն չի դալ, ապա նա կը տայ անուններ... կամաց-կամաց, միշտ թքածը ետ ու ետ լիզելով: Վաղը մարդը կը մեռնի—և նա կը դառնայ արդէն անուն: Բայց անուն կարելի է դառնալ նաև առանց մեռնելու. բաւական է որ Մշակի՛ հասցէն լաւ ճանաչէք և հասցէով ուղիղ շիմէք նորա խմբագրարոտը: Ան ժամանակ դուք, որ այսօր միայն «բացառութիւն» խօսքով էք չալտնի (որ ասել է թէ ձեր անունը ծածկուում է), նորա թերթի սիւնակներում կը լիշ-ւէք ձեր իսկական անունով... իբրև պարնասեան, Ո՛հ—երջանկու-թիւն: Խրատ ձեզ, ով «բացառութիւններ»—ճանաչեցէք Մշակի՛ հասցէն. դորանից էլ «հեշտ» թնչ կալ, ձեզ խնդրում են, չորդորում և... դուք չէք լսում, Ձեզնից իս օրանաւոր չի խնդրում Մշակ՛ը, գրեցէք թշխակցութիւններ, որ և է բան վերջապէս, կամ առհասարակ կանգնեցէք նորա կողմը, այդ թերթի կեղտոտութիւնները, ին-սինուացիաները, թքալիզութիւնը հուշակեցէք իբր «ակորունքներ», «Դրօշակ»—և դուք անանուն «բացառութիւններ» տեղ կը լիշւէք ձեր իսկական անուններով ու... Մշակի՛ պատրաստած Պարնասի գաղա-թին կը փալէք ամենայն ապահովութեամբ...

ԿՈՍՏԵՒԻԱ ՅԷ՝ ԴՐԱՎԱՆ ՀԱՆԳԷՍ, Սրեք փարի (—3 փարի) առաջ ոչ
 առանց շառաչի լուս փեսա մի ժողովածու, անուանը Նոր-Փորձ, Նրա-
 փարակութիւն բժշկ Սիմէոն Եանազարեանցի, խմբագրութեամբ
 մտիք. Եանազարեանցի. Ալեուհեան Նոր-Փորձի անուանը մենք փե-
 սեյ ենք միմիայն ալլոց լորելեաններին, մի-մի անգամ էլ... Նոր-
 փարի մէջ, Սրիւակ, սորա աշխատակիցներինց մէկը կը գրի թէ լոյ-
 ւած է շրկել... Նոր-Փորձին, կամ թէ՛ ինչու ուշանում է Նոր-Փորձը,
 ախար ես լոյւած եմ շրկել նորան, Մի խոսքով կալ անուանը, խմբագրիք,
 Նրափարակիչը, բաց Բնքը Թերթը—մէջ փեղում չը կալ ու չը կալ
 եւ ահա տեղում են բացափրութիւններ, միշտ, ի նարկէ, Նոր-Փարում,
 թէ ինչու մէջ տեղում չկալ Նոր-Փորձը: Եւ բացափրութիւններ
 փեղն էլ ինքը Նրափարակիչն է, նախ Նոր-Փարի այս փարալ
 № 11-ում: Բաց այդ բաւական չէր. ահա և երկրորդ անգամ մի
 բացափրութիւն նորն թերթի № 45-ում, շարձեալ գոյութիւն չու-
 նեցող թերթի սրափարակչին կողմից, Աերջինս, կրկնելով իւր առա-
 ջին անգամալ ստածը, գրում է թէ սխոնարհաբար խնդրում եմ նա-
 ւափալ, որ սՆոր-Փորձի երկրորդ փեղրի լուս չփեռնելու մրակ պատ-
 ճառը նիթերի պակասութիւնն էր (ի նարկ է ալում էլ է):

Այսպէս ուրեմն 2-րդ գրքի լուս չը տեսնելու միակ պարճառը
 Նիւթերի պակասութիւնն է. Եւ մի ալ փեղ խոստովանում է որ ալս
 երեք փարալ ընթացքում հազիւ 60 երեսի ճիւթ՝ հաւաքած եղել...
 Արիք ու հասկացեք թէ ալս ինչ Նրափարակչական ու խմբագրական
 ցաւով պիտի մարդիկ բռնած լինեն, որ խոստովանում են թէ նիւթ
 չունին հրափարակելու, բաց դեռ շարունակում են իրենք իրենց
 սխմրագիրս, սրափարակիչն անւանել... Աարդացեք նորն նամակի և
 այս փոշիքը. սՆոր-Փորձի երկրորդ, ճրտարակելիք, բաց չճրո-
 տարակած, համարի ենթադրած ցանկի մէջ հինգ քննադատական լոյ-
 ւածներ էին նշանակւածո—այդ ճիշդ է. Սակալն չստանանք, որ դա
 սիայն ենթադրութիւն էր և ուրիշ ոչինչ: Եւ ալս եղանակով մին-
 չև վերջ:

ՏԱՃԿԱ-ՀԱՅԻՐ:

—Մուշից ստացւած են փեղեկութիւններ անտիղ փիրոլ սովի
 աստին. Ռուսաց «Недѣля» Պեղերրուրդի շարաթաթերթում տպւած
 է թղթակցութիւն ժողովրդի անօգնականութեան մասին և թէ ինչ-
 պէս բարձրաթիւ որքեր տարաթրկ թափառում են փաղցներում.
 —Պր. Նր. Չանչեանը «Նշարակչական օգնութիւն լինաւած հալերին Տան-
 կափանումն ժողովածուի արդիւնքից Կ. Պոլսի հալոց պարբիրաբին
 նորից 2,500 ու է շրկած 9-րդ օրու-հալակական օրրանոցը Մուշում
 հիմնելու համար:

—Ասի կաթողիկոսական ընտրութիւններին նախագահելու համար փետր. 13-ին Երուսաղէմից Ատանայ ուղևորեց Կ. Պոլսի Ազգ. կենտ. վարչութեան պարտիրակ Սահակ եպիսկոպոսայեանը: Ընտրութիւնները վերջացած կ'լինեն Չափկից առաջ:

—Կ. Պոլսի Պետալի թաղական խորհուրդը էստեան վարժարանի մէջ բացած է ընթացիկ դպրոցական տարւոյ սկզբից (անցեալ սեպտեմբերից) աշխատեց բարձրագոյն նախակրթութեան չարկացրած դասընթացը:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ. Պարսից Շահ Մուղաֆֆար-է-Դ-Գիինը առաջիկայ մալիսից երկարատե ճանապարհորդութիւն է կատարելու և լինելու է Պետերբուրգ, Բերլին, Պարիզ, Լոնդոն, Վիեննա և Կ. Պոլսի Շահը նախ լինելու է Թիֆլիս ու Բորժոմ:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ.

—Անցեալ չունւարին Երալիան պահանջ դրեց որ Սիւլիա Ձէնէլի անուճով իրաւունին, որը անչափահաս լինելով թիւրքաց հարէմ էր մտել և մասնագրութիւն ընդունել, չեղ տրւի իւր ծնողներին: Բ. Գուռը պարասխանեց թէ թիւրքաց օրէնքներով աշխիւր չափահաս էր: Իրալիան սպառնաց շիւանագրական չարարեութիւններ խզումով, քանի որ իրաւունին անչափահաս է իրալական օրէնքներով: Վերջը Բ. Գուռը զիջեց և Սիւլիա Ձէնէլիին չանձնուց իրալացի ծնողներին:

ՆՐ ՄԻՏՐԱՅԼԵՅՉ. Ֆրանսիայում, կինտոյի գործարաններում, սկսած են շինել նոր տեսակի միտրայէօզ, որը չարկացած է նաւալին գորութեամբ: Երևած է Հոյֆիս ձևով և բաժանուճ 30 մասերի. այն գործածելու համար հարկաւոր է 2 մարդ և կշռում է 24 կիլոգրամ: Այդ նոր զէնքը մի բոպէլում (միճուտ) կարող է 500 և նոյն իսկ 600 հարած արձակել: Մաքսիմ մի տրայէօզից ի վեր բնաւ աչդպիսի չառաջդիմութիւն եղած չէր: (Թղթակց. A. Saissy և Գաւթ-բէկ):

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԹԵԼԵԲՐ. Անգլիա միակ պետութիւնն է որ երկրագնդի ամեն տեղ ամենից շատ հեռագրակ, թելեր ունի՝ ծովերի դակ և թէ դամաքների վրայ: Անգլիայի հեռագրակաճ թելերը հաշւում են 250, հազար կիլոմէտր (գրեթէ նոյնքան վերաք), որով նա ամբողջ աշխարհին տիրում է: Հիւսիսային Ամերիկայի կողմից 10 տարրեր թելեր կապում են Անգլիան կանադալի և Միացեալ Նահանգների հետ, 3 թել ևս Հարաւային Ամերիկա են գնում. ուրիշ անգլ. թելեր Անգլիան հաղորդակցութեան մէջ են գնում Միջին Ամերիկայի, Անտիլեան կղզիների և խաղաղականի եզերքների հետ: Արևելքի համար անգլ. թելերը մտնում են Լոնդոնից և Գիրբալ-

տակից Մալթա և Եգիպտոս ու Կարմիր ծովից մինչև Աշէն: Աշէնի մէջ գտնուում է անգլ. հեռագրական թեղիների հանգույցը, ուստից 3 գիծ գնում են Հնդկաստան, ալաբերդից Չինաստան, Աւստրալիա և Նոր Զելանդիա: Մի ասլ թեղ ևս Աշէնից անցնում է Աֆրիկայի Արեւելեան կողմը՝ Չանգիրաբ, Մոզամբիկ, Գեյուտա, Նաթալ և Բարեյուտոյ Հրաանդանը: Աֆրիկայի արեւմտեան կողմերը անգլ. զծերը անցնում են Պորթուգալից ու Իսպանիայից դէպի Պաթիւրոթ և Գամբիա:

Այլ պետութիւնները ստիպւած են հեռագիրների համար լաճախ Անգլիային դիմելու, որինանկ Ֆրանսիա փարեկան շտապ հասարկմարում է 3 միլիոն 337 հազար Ֆրանկ, (Թղթակցութիւն A. Saissy և Մեյլիք Ս. Գաւրիթ-Բէկ):

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱԽՔԵՐԸ. Հարէջտօանի պատերազմը. 1868-ին ընդդէմ Թէոդորոս թագաւորի, Անգլիային նստեց 200 միլիոն Ֆրանկից աւելի, գործածելով միայն 14,000 զինուոր, որի մեծամասնութիւնը փեղացիներ էին: 1882-ին Արաբիի դէմ պատերազմը (Եգիպտոսում) նստեց 340 միլիոն Ֆր., ուր պէտք եղաւ 20 հազար զինուոր գործածել: Ալէքսանդրիայի ումբակոծումից ու Թէլ-էլ-Բէէքիի կուրից չեփոյ, էքսպրէս շոգեկառքով, անգլիական բանակը արշաւեց Կալիբէի վրայ, որի շուները բացւած էին Անգլիացոց մօտեհնալը լսելու: Աւշանստանի պատերազմը Անգլիային նստեց 612 միլիոն Ֆր.: (Թղթակց. A. Saissy և Մեյլիք Ս. Գաւրիթ-Բէկ):

ԱՆԳԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌՈՒՏՈՒՐԸ. Ներմուծումը 1899-ին եղաւ 485. 085.514 անգլ. ոսկու (ոսկին փասը ուսրլիով՝ աչդ կ'անէ 4 միլլիարդ 850 միլլիոն, 755 հազար և 140 ուսրլի, կամ Ֆրանկով հաշւած՝ 12 միլլիարդ 126 միլլիոն Ֆրանկ). Նախորդ փարւանից 14,696.981 անգլ. ոսկի աւելի: Արտածումը հասաւ 264 միլլիոն 660 հազար 647 անգլ. ոսկի, որ աւել է թէ 2 միլլիարդ 646 միլլիոն ուսրլի, կամ՝ 6 միլլիարդ 616 միլլիոն Ֆրանկ: (Նախորդ փարւանից 31 միլլիոն ոսկով աւելի). Ներածում և արտածում միասին, ուրեմն, Անգլիայի արտաքին առուրուրը եղած է Ֆրանկով 18 միլլիարդ 742 միլլիոն: Զին ԵՒ ՖՐԱՆՍԻԱ, Ֆրանսիան Զինի հետ շաշն կապեց որով Ֆրանսիական հողը Շանխայ քաղաքում աւելի քան կրկնապատկուում է: Փետրւարի 19-ին աչդ փերրիտորիան լանձնեց Շանխայի Ֆրանսիական խորրդարանին:

† ԼԱՐՈՎ, Պ. Լ., վախճ. Պարիզում լուծւ. 25-ին: Հանգուցեալը ուստաց խոշոր ֆիլոսոֆաներից էր: Մեւեց 1823-ին, կրթեց զինուորական շպրոցում, 60-ական թւականների վերջը Նա փեղափոխեց Պարիզ, ուր և ապրեց մինչև իւր կեանքի վերջը:

† ՆՈՒՐԵԱՆ, Յովհաննէս, վարճանեց Կ. Պոլսում փեդրու սկիզբները, Անդամ էր թիւրքաց պետական խորհրդի օրէնսդրական ճիւղի, նախագահ երկրագործական բանկի. միաժամանակ նա կարեւոր ներգործութիւն ունեցաւ դեղի պարրիարքական և ալ գործերի վրայ, դաճկական կառավարութեան քաղաքականութեան կողմնապահութեամբ:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թւական չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ԳԷՅՕԹԷ, վ. լիֆլանդ, ֆոն. — «Էգմոնտ». Դրամա հինգ գործողութեամբ թարգմ. Հմայեակ Մաթինեանցի: Արտագրած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպ. Տ. Ռօրինեանցի, 50 կոպէկ:
- 2) Մ. Ա. Գ. (կազմող). — «Իգնատիոս Լոյօլա. նրա կեանքը և հառարակական գործունէութիւնը». պարկերով. Թիֆլ., տպ. Ռօրինեանց 1899. 30 կոպէկ:
- 3) ԶԵԼԻՆՍԿԻ, Ս. — «Պոռուլ չորացնելը» (քսանեկեց նկարով). Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 5 կոպէկ:
- 4) ABOVIANTZ, Alexandre. — La lutte contre la variole par le vaccination et l'Institut vaccinogène suisse de Lausanne. Thèse pour obtenir le grade de docteur en médecine. Lausanne, imp. A. Borgeaud.
- 5) ВЕСЕЛОВСКИЙ, Юрій. — Литературные очерки. Москва. тип. Васильева. 2 ուրլի:

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՍՈՐԿՂ.

Թիֆլիս, Պր. Երւ. Լաւանու.— Սրացած ենք Ազգագրական Հանդէսի 1900 թ. գրքերի համար 3 ու. Թիֆլիսից, օր. Հ. Մ. — Հ-ից և 3 ու. Շահրուրի «Վազգէն» ընթերցարանից:

Կ. Պոլիս. Ա. Ա. Ին. շրկեցինք Մուրճ № 7-8—12 Զմիւռնիայի հասցէով:

ՎՐԻՊԱԿՆԵՐ՝ (Առաջին թւանշանները էջերն են, երկրորդները՝ տողերը):
 Մուրճ 1899 № 11-12, 140—13 վարից, լրացնել և ուղղել՝ Որովհետև խաշացել են. այս լանցանք չէ. Շահել են, և ալլն.— 1409—11 զոտ (ոչ՝ 7էգ. զոտ նշանակում է ոսկու կամ արծաթի կորո—lingot):

Մուրճ 1900 № 1 «Գեղեցիկների մի գիշեր», 42—4 վարից Կոչսի (ոչ՝ Յոսի). 43—3 յարձած. 45—՝ 2 մուռացութեան:

«Գերման. օգն. Տաճկա-Հայերին» լօղւածում 71—3 (ծանօթութեան մէջ) աչնպիսի ուսում, որը...